

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՉԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑԻՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր – Հովհաննես Դրասխանակերտցի, Հովհան Մայրազումեցի, Հովհան Օձնեցի, պատմություն, սկզբնաղբյուր, բանահյուսություն, ավանդություն, հրաշապատում, գեղարվեստ, մոտիվ, կերպար

Իր ծանր և հալածական կյանքի համար «Մաշեալ» մականունը ստացած Հովհաննես Դրասխանակերտցին¹ հայ միջնադարյան նշանավոր մատենագիրներից է, որի կենսագրությունը սերտորեն կապակցված է իր ապրած ժամանակաշրջանի՝ IX դարի վերջի և X դարի առաջին քառորդի հայ հասարակական-քաղաքական իրադարձությունների պատմության հետ²: Նա հայոց առաջին պատմիչ կաթողիկոսն է³, հայրապետական աթոռին բազմած՝ Հովհաննեսներից վեցերորդը⁴: Հաջորդ դարերի մեր մատենագիրները նրան հիշում են Հովհաննես Դվնեցի, Հովհաննես Գառնեցի, ավելի հաճախ՝ Հովհաննես Պատմաբան անուններով: Ստեփանոս Ասողիկը (X-XI դդ.) նրան «ճարտասան» է անվանում⁵, իսկ XVIII դարի ժամանակագիր Դավիթ Բաղիշեցին՝ կոչում «անյաղթ փիլիսոփայ և պատմագիր»⁶:

Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսի գրական գործը՝ նրա «Հայոց պատմությունը», գրվել է ծերության հասակում⁷: Այդ աշխատությունը, որ հայոց ընդհանրական պատմությունն է, գլուխների բաժանված չէ, «բայց, – ինչպես գրում է Վ. Սաֆարյանը, – պայմանականորեն կարելի է երկու մաս

¹ Տե՛ս **Բախչինյան Հ.**, Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի // «Էջմիածին», 1973, թիվ 9, էջ 43:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս **Թումանյան Կ.**, Յովհաննես պատմիչ կաթողիկոս // «Հայաստանի կոչնակ», 1922, թիվ 44, էջ 1420:

⁴ Տե՛ս **Մ. Վ. Գալեմբեարեան Գ.**, Միւնեաց դպրոց.- ԺԷ. Յովհաննես կաթողիկոս պատմաբան // «Տաճար», 1912, թիւ 34, էջ 502:

⁵ Տե՛ս **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 480:

⁶ Տե՛ս **Բախչինյան Հ.**, նշվ. աշխ., էջ 47:

⁷ Տե՛ս **Աբեղյան Մ.**, նշվ. աշխ., էջ 482: Այդ մասին տե՛ս նաև՝ **Մկրչյան Մ.**, Երկեր, հ. 1, Երևան, 1987, էջ 391, **Բախչինյան Հ.**, Հովհաննես Դրասխանակերտցու Պատմության գրության ժամանակը // «ԲԵՀ», 1976, թիվ 3, էջ 122-126:

տեսնել. առաջինը Խորենացու նման սկսում է հնագույն առասպելներից, նախորդներին խիստ համառոտելով՝ հասցնում մինչև 9-րդ դարի կեսերը, որից հետո, որպես սկանառես, գրում է մանրամասն ու գեղարվեստորեն, ավարտում 924 թվականով»¹:

Հին շրջանի իրադարձությունները պատմագրելիս Հովհաննես Դրասխանակերտցին որպես սկզբնաղբյուր ունեցել է V դարի մեր դասական պատմիչներին՝ հատկապես Ագաթանգեղոսին, որին նա պատվում է «հմուտ պատմագիր», «ստուգապատում պատմագիր» կոչումներով², Փավստոս Բուզանդին, մանավանդ Մովսես Խորենացուն և Եղիշեին, որոնց գրելաձևն ու շունչը զգացվում է գրեթե ամեն քայլափոխի³: Հետագա շրջանի պատմագիրներից օգտագործել է Մեբեոսի, Ղևոնդի, Մովսես Կաղանկատվացու և Շապուհ Բագրատունու վկայությունները⁴ և, ինչպես ինքն է վկայում, «'ի ծերունեացն անցեալ բան» («ծերունիներից անցած խոսքը») (134, 135): Հովհաննես Դրասխանակերտցին լավատեղյակ է եղել նաև անտիկ աշխարհի գրականությանը, իր աշխատանքում մի քանի անգամ հիշատակում է Եղիական, այն է՝ Իլիական կամ Տրոյական պատերազմը (23, 245), և մեջբերումներ կատարում Սողոմոնից⁵ (31):

Հովհաննես Դրասխանակերտցին, ինչպես հասկացանք, դիմել է նաև ժողովրդական բանահյուսությանը: Մասնավորապես անցյալի այս կամ այն հոգևոր-պետական անձի մասին գրելիս նա առատորեն օգտագործել է անգիր զրույցներ⁶, հանգամանք, որը ցայսօր կաթողիկոս մատենագրի «Հայոց պատմությանը» առնչվող այլազան հարցերի վերաբերյալ ստեղծված շոշափելի բանասիրական գրականության մեջ⁷ անհրաժեշտ ուշադրության չի արժանացել: Բնականաբար խոսքը չի վերաբերում մասնավորապես Մովսես Խորենացու հաղորդած կամ վկայած հայ հնագույն բանահյուսական այն հուշարձաններին, որոնք իր պատմության առաջին հատվածում՝ «հին մասում»⁸, ավելի հաճախ խիստ համառոտելով, վերապատմում է Հովհաննես Դրասխանակերտցին՝ առանց, սակայն, վկայաբերելու Պատմահոր

¹ Մաֆարյան Վ., Հայ միջնադարյան գրականություն, Երևան, 2016, էջ 147:

² Տե՛ս նաև **Հովհաննես Դրասխանակերտցի**, Հայոց պատմություն, Երևան, 1996, էջ 41 (այսուհետև այս գրքից հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերում նշելով միայն էջը):

³ Տե՛ս **Մկրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 393:

⁴ Տե՛ս **Բախչինյան Հ.**, Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, էջ 45:

⁵ **Սողոմ** կամ **Սողոմ** (մոտ 638 մ. թ. ա. – 558 մ. թ. ա.). Հին Հունաստանի Աթենք քաղաքի հայտնի պետական գործիչ, օրենսգիր և բանաստեղծ: Հին Հունաստանի յոթ իմաստուններից մեկը: Տե՛ս <https://hy.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%B8%D5%AC%D5%B8%D5%B6> (մուտք՝ 21.06.2021):

⁶ Տե՛ս նաև **Բախչինյան Հ.**, նշվ. աշխ., էջ 45:

⁷ Տե՛ս նաև **Խաչատրեան Պ.**, Հայ հին գրականության մատենագիտություն, Երևան, 2016, էջ 345-347, **Մկրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 391-407, **Մաֆարյան Վ.**, նշվ. աշխ., էջ 146-154:

⁸ Տե՛ս **Աբեղյան Մ.**, նշվ. աշխ., էջ 482:

անունը: Խոստովանենք, դա առնվազն տարօրինակ է, մանավանդ որ երբ ներկայացնում է Հայկի և Բելի, Արամի, Արա Գեղեցիկի և հաջորդների պատմությունը՝ մինչև Երվանդի որդի «մեծն Տիգրան», ընդգծում է. «Եւ այսքան անուանք և գրոյցք թէ հարցեալ լինի՝ յորմէ՞ գոլ գիտել, գիտասցէ զի Քաղդէացոց մատեանքն մեզ ընձեռեցան, որք կան ՚ի Նինուէ և յԵդեսիայ առ Տիբերիւ գրեալ» («Եվ եթե մեկը հարցնի, թե այսքան անուններն ու դեպքերը որտեղի՞ց գիտենք, պիտի իմանա, որ այդ ամենը մեզ ընձեռեցին քաղդեացիների մատյանները, որոնք գրվել են Տիբերի օրոք և գտնվում են Նինվեում ու Եդեսիայում») (24, 25):

Մովսես Խորենացուն և նրա գիրքը՝ որպես սկզբնաղբյուր, Հովհաննես Դրասխանակերտցին հիշում է միայն Հայաստանի՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև բաժանվելու պատմությունը վկայաբերելիս, երբ գրում է Պապի որդի Արշակի և Արշակունի Խոսրովի մասին. «Այլ երկոցունց սոցա զվարս և զկարգս և զարութիւնս և զանարութիւնս և զպատերազմունս՝ թէ պիտոյ է քեզ, բովանդակաբար ցուցցէ քեզ Պատմութիւնն Մովսեսի Խորենացվոյն» («Այս երկուսի վարքը, կարգերը, արիությունները, անարիություններն ու պատերազմները, եթե պետք է քեզ, [ընթերցող], այդ ամբողջը քեզ ցույց կտա Մովսես Խորենացու պատմությունը») (54, 55): Մեկ անգամ էլ մինչև հայերի դարձին առնչվող վիպական անցքերի նկարագրությունը, որպես սկզբնաղբյուր նա վկայում է Ագաթանգեղոսին (41, 43): Մյուս դեպքերում Հովհաննես Դրասխանակերտցին առանց կոնկրետ հղագրության ավելի հաճախ բավարարվում է անորոշ ձևով ընդամենը ծանոթագրելով՝ «պատմում են» (17, 19, 27, 31), «ասվում է» (25), «ասում էին» (25, 29), «ասում են» (41) և այլն: Օրինակ, հենց Արամի մասին գրելիս նա վկայում է՝ «պատմվում է» (21), իսկ Վահագնի կապակցությամբ՝ «ասում էին», «ասվում է» (25):

Այստեղ չենք կարող չշեղվել բուն նյութից և չնկատել, որ մասնավորապես Քերթոդահոր ազդեցությունը ակնհայտ է ոչ միայն Հովհաննես Դրասխանակերտցու շարադրանքում, այլև հերոսների նկարագրերում, նրանց տված բնութագրերում ու գնահատականներում, որ դարձյալ վկայում է, թե նա օգտվել է Մովսես Խորենացուց¹, սակայն կրկին նրա անունը չտալով: Այս հարցի կապակցությամբ անվերապահ ու միարժեք գնահատականից խուսափելու համար միայն նկատենք, որ Հովհաննես Դրասխանակերտցու նման արտասովոր պահվածքը թերևս ունի անհատական պատճառներ. կարծում ենք՝ հեղինակային փառքն է կաթողիկոսին ստիպել քողարկել Մովսես Խորենացու անունը, որպեսզի, ինչպես ինքն է գրում, «...զի մի՝

¹ Ի դեպ, վաղուց է նկատվել, որ Հովհաննես Դրասխանակերտցին հաճախ է նմանել նախորդների լեզվին, ոճին, գործածել նրանց դարձվածները, մտածողության ձևերը, պատկերները և այլն: Տե՛ս օրինակ, **Օշական Յ.**, Յովհաննես պատմաբան, Թ. Դար // «Միոն», 1929, թիւ 6, էջ 180-181, **Աբեղյան Մ.**, նշվ. աշխ., էջ 485, **Սկրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 393, **Սաֆարյան Վ.**, նշվ. աշխ., էջ 148-149:

տղայաբար ինչ յանդգնեալ զմիանգամ գրեալան երկրորդեցից և զքերթողացն արուեստ տապալեցից, և զայն վերձանողացն ծիծաղելիս յարկացուցից» («...չլինի, թե մեկ անգամ գրվածը միամտաբար հանդգնենք նույնությամբ կրկնել, քերթողների արվեստը խաթարել ու այն ընթերցողների համար ծիծաղելի դարձնել») (6, 7, 8, 9):

Վերադառնալով մեր բուն նյութին՝ նկատենք, որ «Հայոց պատմության»՝ V դարին հաջորդող դեպքերի նկարագրությունը ընդգրկող հատվածը՝ մինչև IX դարավերջ ընկած պատմական իրողությունների շարադրանքը, իր ճանաչողական և աղբյուրագիտական նշանակությանը զուգահեռ առանձնանում է նաև գեղարվեստական ուժով: Դրանում շատ էական է բանահյուսական բնույթի այն ավանդագրույցների ու վկայությունների դերը, որոնք տեղ են գտել նրա պատմության մեջ մասնավորապես Հովհան Մայրագումեցու, Եգր Ա Փառածնակերտցի կաթողիկոսի, Հովհան Օձնեցու և ուրիշների մասին¹:

Սակայն մինչև վերջիններիս անդրադառնալը գրեթե անհնար է վանել գայթակղությունը և կանգ չառնել «Հայոց պատմության» «հին մասում» Վահագնի առնչությամբ Հովհաննես Դրասխանակերտցու արած մի դիտարկման վրա, որը մեր համոզմամբ խիստ արժանի է ուշադրության: Ինչպես Մովսես Խորենացին, Հովհաննես Դրասխանակերտցին ևս Վահագնին ճանաչել է տալիս որպես Տիգրանի որդիներից երրորդը և ապա գրում. «...գոր ՚ի կանտոցահար աղերախս ընդ վիշապաց համբաւէին կռուիլ նմա և յաղթել...» («Վերջինիս մասին ասում էին, թե նա **քնարահարությամբ** է կռվել վիշապների հետ և հաղթել») (24, 25) (ընդգծումը մերն է – Վ. Ա.):

Իր հիմնական առասպելում, ինչպես գիտենք, Վահագնը կռվում-հաղթում է վիշապներին², սակայն չի վկայվում, թե ինչպես, և բնականաբար դժվար է որևէ վերջնական փաստարկով պատճառաբանել այդ անձանոթ գործառույթի մուտքը Վահագնի առասպել, քանի որ բանահյուսական պատկերացումները ընդհանրապես միարժեք չեն³: Սակայն, կարծում ենք, այդ գործառույթի հիշատակումը կարելի է մեկնաբանել առասպելական համատեքստում որպես ամպրոպային հնավանդ առասպելի մի վերապրուկ, որ ժողովրդական բանահյուսությունից առել է Հովհաննես Դրասխանակերտցին իբրև Վահագնի վերաբերյալ դիցաբանական հատկանիշ, որ գոյություն է ունեցել հայկական հնագույն պատկերացումներում, իսկ հետո մթագնել⁴:

¹ Տե՛ս **Բախչինյան Հ.**, նշվ. աշխ., էջ 45:

² Տե՛ս **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 103:

³ Տե՛ս **Պետրոսյան Ա.**, Հայկական վիշապամարտի երկու հակադիր կերպարներ // «ՊԲՀ», 2010, թիվ 1, էջ 189:

⁴ Թե այդ գործառույթը առասպելաբանական մակարդակում հնարավոր ինչ նշանակություն կարող էր ունենալ և կապվել Վահագնի հետ, մենք թողել ենք մեկ այլ ուսումնասիրության:

Հովհաննես Դրասխանակերտցու գրքում ժողովրդական գեղարվեստական միտքն իր արտացոլումն է գտել, ինչպես արդեն նկատեցինք, հատկապես Եզր Ա Փառաժնակերտցի¹ կաթողիկոսի, Հովհան Մայրազումեցու և Հովհան Օձնեցու մասին ավանդություն-հուշապատումներում, որոնք ունեն նաև վարքաբանական բնույթ: Հիշյալ պատմական բոլոր անձնավորությունները նշանավոր բարձրաստիճան հոգևորականներ են, և պատահական չէ, որ հենց նրանց վերաբերյալ են ձևավորվել ավանդագրույցներ, քանի որ «Վարքաբանական ավանդագրույցների հերոսները,– ինչպես գրում է անվանի բանագետ, ակադեմիկոս Արամ Ղանալանյանը,– հաճախ հանդես են գալիս իբրև հրաշագործ ու գերբնական արարածներ, իբրև յուրահատուկ սրբեր: Ժողովուրդը սրբացրել է գլխավորապես իրական ու պատմական այն գործիչներին, ովքեր իրենց մտահոգության առարկան դարձրել են ազգակիցների ու հայրենակիցների շահերը, սեփական անձը ի սպաս դրել հարազատ ժողովրդին, պայքարել ու ստեղծագործել են նրա համար»²:

Եզր Ա Փառաժնակերտցի կաթողիկոսն ու Հովհան Մայրազումեցին կերպավորվում են մասնավորապես փոխադարձ հարաբերություններում «Կարինի 633 թ. հայ-բյուզանդական եկեղեցական ժողովի պատճառով ծագած գժտության հանգամանքների նկարագրության վրա, որտեղ Հովհանը ներկայացվում է բացառապես դրականորեն»³:

Եզր Ա Փառաժնակերտցուն, որի կաթողիկոսական աթոռ բարձրանալը, ի դեպ, համընկավ Հայաստանի տարածքով խաչափայտի գերեղարձին, Հովհաննես Դրասխանակերտցին չի վարանում Աստվածաշնչին անձանոթ լինելու պատճառով տգետ անվանել (81): Բանն այն է, որ երբ հունաց Հերակլ կայսրը ջախջախում է պարսից Խոսրով Երկրորդի զորքերը, և բյուզանդացիները դարձյալ տիրում են մեր երկրի մեծ մասին, Հայաստանի կառավարիչ ՄԺԺԺ Գնունին, որ այդ պաշտոնին նշանակվել էր կայսեր կողմից, Եզր Ա Փառաժնակերտցի կաթողիկոսին պատվիրում է «երթալ լինել կցորդակից և հաղորդ կայսեր ՚ի գործ մասին խոստովանութեան հաւատոյ» («գնալ ու կայսեր հետ կցորդակից ու մասնակից լինել հավատի խոստովանության գործին») (80, 81): ՄԺԺԺ Գնունին նաև Եզր Ա Փառաժնակերտցուն սպառնում է, որ եթե նա հրաժարվի, ապա կգրկվի կաթողիկոսությունից, և փոխարենը նորը կընտրվի: Կաթողիկոսը հանդիպում է Հերակլին ու ձևական բնույթ կրող դավանաբանական վիճաբանությունից հետո ընդունում քաղկեդոնականությունը և հաղորդվում «հերձվածողի» հետ⁴: Իբրև հատուցում իր այս

¹ Այս և հետագա բոլոր կաթողիկոսների ամբողջական անուններն առնված են <https://www.qahana.am> կայքից (մուտք՝ 29.03.2021):

² **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Երևան, 1969, էջ ԻԹ:

³ **Տ. Սևորեաս արք. Եզեկյան.** Հովհան Մայրազումեցու կյանքի եւ գործունեության շուրջ // «Էջմիածին», 2018, թիվ 9, էջ 30:

⁴ Տե՛ս **Մկրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 268:

քայլի՝ Եզր Ա Փառաժնակերտցոյն որպէս պարզև արքայից ստանում է Կողբ գյուղաքաղաքի երրորդ մասը՝ իր աղահանքով, և վերադառնում Դվին, որտեղ եկեղեցու կղերականները շտապ նրան ընդառաջ են գնում:

Հետաքրքիր է, որ այս իրողությունը Հովհաննէս Դրասխանակերտցին բացատրում է նրանով, թէ Եզր Ա Փառաժնակերտցին կայսեր հետ հանդիպման գնալիս իր հետ տանում է ոչ թէ «զՅոհան փակակալ սրբոյն Գրիգորի, որ էր յայնմ ժամանակի փիլիսոփայ կատարեալ և Աստուածային Գրոց գիտութեան բանիբուն ճանաչէր. այլ զայլ ոմն զիր քեռորդի՝ կիսակատար ուսմամբ...» («սուրբ Գրիգորի փակակալ Հոհանին, որն այն ժամանակ կատարյալ փիլիսոփա էր և Աստվածաշնչի գիտությամբ քաջատեղյակ, այլ իր հետ վերցնում է կիսակատար ուսման տեր իր քեռորդուն...») (80, 81): Դա է պատճառը, որ կաթողիկոսին դիմավորող հոգևորականների հետ Հոհանը (նաև՝ Հովհան) չի ներկայանում նրան՝ ըստ պատշաճի երկրպագություն տալու: Եվ հենց այստեղ գեղեցիկ մանրամասներով Հովհաննէս Դրասխանակերտցին պատմում է Եզր Ա Փառաժնակերտցու և Հովհանի բախման մասին, որի շնորհիվ կերպարավորվում է նաև «փիլիսոփոսն Յոհան»: Երբ Հովհանը մերժում է կաթողիկոսի հետ տեսությունը՝ պատճառաբանելով, թէ ինչպէս կարող է ինքը ողջունել մեկին, ով խախտել է ուղղափառ հայրերի կանոնները, վերջինիս հրամանը սաստկանում է, և Հովհանին գոռով են մտցնում նրա մոտ. «Եւ իբրև յանդիման եղև՝ ասէ կաթողիկոսն, «Խրոխտաբար իմն ամբարհաւաճութեան ընդվզեալ թուիս, վասն այնորիկ ախտակրեալ սրտի ոչ ելեր ընդառաջ մեր և ոչ տեսեր զմեզ»: Եւ նա ասէ. «Խրոխտումն և ամբարհաւաճութիւն յիս ոչ գտանի, այլ ջատագով ճշմարտութեանն լինել հաւանիմ: Բայց քո յիրաւի կոչեցաւ անունդ Եզր, վասն զի յ ե գ զ ր տարեալ հաներ տրոհեցեր զՀյաստանեայսս՝ քակեալ զսահման հաւատոյ Հարցն մերոց ուղղափառաց...»: Ապա հրամայէ Եզր մուրցացի տանջել զպարանոց նորա և զկզակս. իսկ Յոհան ձեռս ՚ի վեր ամբարձեալ ասէ, թէ «Ահաւասիկ գնացի խնդալով յերեսաց ատենին, զի վասն անուանն Տեառնարժանի եղէ անարգելոյ» («Եվ երբ նա ներկայացավ, կաթողիկոսն ասում է. «Հանդուգն, գոռոզ և խռովված ես երևում, այդ պատճառով սրտացավորեն մեզ ընդառաջ չելար և մեզ չտեսար»: Նա պատասխանում է. «Ինձանում հանդգնություն ու գոռոզություն չկա, այլ ես համաձայն եմ լինել ճշմարտության ջատագով: Բայց իրավամբ քո անունը Եզր կոչվեց, քանի որ դեպի եզր տանելով ու հանելով՝ հայաստանցիներին տրոհեցիր և խախտեցիր մեր ուղղափառ հայրերի հավատի սահմանը...»: Ապա Եզր Ա Փառաժնակերտցին հրամայում է բռունցքով խփել նրա պարանոցին ու ծնոտին, իսկ Հովհանը, ձեռքը վեր բարձրացնելով, ասում է. «Ահավասիկ խնդալով գնացի դատարանի առաջ, որովհետև Տիրոջ անվան համար արժանի եղա անարգվելու» (80, 81, 82, 83): Այս ասելով՝ Հովհանը հեռանում է Բջնի ամրոցի լեռան ծործորում գտնվող Մայրո վանք և հաստատվում այստեղ: Եվ իբր կաթողիկոսի կատարած բառախաղի շնորհիվ Մայրո վանքի անունը փոխվում է Մայրագոմի, իսկ

Հովհանն Կոչվում է Մայրագումեցի (81, 83)¹: Հետաքրքիր է, որ Հովհանն էլ կաթողիկոսի Եզր անունը հեզնաբար ստուգաբանում է իբրև սահման, որից խախտվեցին ու խաթարվեցին հայոց ճշմարիտ հավատքի հիմքերը: Անշուշտ, դժվար է միանշանակ պնդել, թե այս ամենը ունի սուկ բանահյուսական ծագում, սակայն, ինչ էլ լինի, մի բան պարզ է, որ հեղինակային մեկնաբանությունները փայլում են տպավորիչ գեղարվեստականությամբ և ունեն ժողովրդական մտածողության նկատելի երանգներ:

Բանահյուսական անդրադարձներ կան նաև Հովհաննես Դրասխանակերտցու՝ Սահակ հայրապետի, այն է՝ Սահակ Գ Չորսփորեցու (հիշատակվում է նաև Չորսփորեցի) մասին պատմություններում: Դրամատիկ ճակատագիր է վիճակվում այս կաթողիկոսին, որի աթոռակալության տարիներին Հայաստանը շարունակում էր մնալ արաբա-բյուզանդական հակամարտության ոլորտում: Հայաստան ներխուժած Աբդլահ անունով ռստիկանը, լինելով, ինչպես պատմիչն է գրում, «այր ժանտ ժպիրի և ապարասան և յաւէտ չարաբարոյ, որ զկեղծաւորութիւնն իբրև զթոյնս իժի յինքն բունեալ ունէր և կալանաւոր կապանօք չարչարէր զիշխանս և զազատս աշխարհիս Հայոց, և յաւարի առնոյր զկարասի և զստացուածս բազմաց», («դաժան, անօրէն, կատաղած և խիստ չարաբարո մի մարդ, որը կեղծավորությունը իր մեջ դրած ունէր իբրև իժի բոյն և կալանավորի կապանքներով չարչարում էր Հայոց աշխարհի իշխաններին ու ազնվականներին և թալանում շատերի ունեցվածքն ու հարստությունը») (96, 97), Սահակ կաթողիկոսին Հայոց իշխան Սմբատ Բագրատունու հետ շղթայում և տանում է Դամասկոս: Դրանից հետո ևս խալիֆայի գորականների անլուր վայրագություններն ու ավազակային հարձակումները շարունակվում են, որոնց մեր ժողովուրդը երբեմն հակադարձում է, ըմբոստանում և արդար զայրույթով վրեժխնդիր լինում: Հայերի ապստամբության պատճառով խալիֆան պատժարշավ է ձեռնարկում Հայաստանի վրա՝ սպառնալով հրդեհել, քանդել հայոց եկեղեցիները, կործանել, սրի մատնել ժողովրդին: Սահակ Գ Չորսփորեցին, որն այդ ժամանակ, ինչպես վկայում է Հովհաննես Դրասխանակերտցին, դեռ Դամասկոսում էր, լսելով արաբ գորապետի սպառնալիքների մասին, նրա մոտ գնալու իրավունք է խնդրում՝ հուսալով հաշտության եզրեր գտնել: Սակայն ճանապարհին՝ Խառանում, նա ծանր հիվանդանում է և վախճանվում: Մահից առաջ, սակայն, նա արաբ գորապետին «աղաչալից», «խրատական խոսքերով» մի նամակ է գրում, որտեղ հիշեցնելով «մարմնի սովորական մահը», «դժոխքի խիստ դառնությունը», «ինչպես նաև օտար տեղում իր մեռնելը նրա համար որպես մեղմացնող փաստ բերելով», համոզում-աղաչում է

¹ «Մայրագումեցի» անվան ծագման մասին մանրամասնորեն տե՛ս **Տ. Անդրեաս արդ. Եզեկյան**, նշվ. աշխ., էջ 34-37, **Գալստյան Գ.**, Պատկերամարտական շարժման դրսևորումները Հայաստանում // «Գիտական տեղեկագիր» Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի, 2019, թիվ 2, էջ 202:

հետ դառնալ չար խորհրդից և չկատարել այդ ապիրատ մտադրությունը (98, 99): Ապա հրամայում է, որ իր մեռնելուց հետո այդ հրովարտակը դնեն իր աջ ձեռքում, որպեսզի գորապետը գալով վերցին իր ձեռքից և թերևս զոջա ու չկատարի իր անօրեն մտադրությունները: Եվ իսկապես, երբ խալիֆայության ոստիկանը գալիս և մոտենում է «Աստծու մարդու դիապատված մարմնին» և նրան ողջունում որպես կենդանի մարդու, «Հոգույն ազդումնն զձեռն սրբոյն, որ անշնչութեամբն էր խափանեալ՝ շարժեաց ընդդէմ ոստիկանին՝ ՚ի պատճառս աղերասնաց» («Հոգու ազդեցությամբ ոստիկանի դիմաց սուրբը աղերսանքով շարժեց իր անշնչացած ձեռքը...») (100, 101): Աբդուլահ ոստիկանը, նախ զարմանալով այս հրաշագործության վրա, որ հարկավ ունի բանահյուսական ակունք, կարդում է նամակը, ապա հիանալով կաթողիկոսի կամքի ուժով ու նվիրվածությամբ՝ ներում հայոց նախարարների «հանցանքները», խոստանում կատարել նրա՝ նամակում նշված խնդրանքները՝ կասեցնելով դեպի Հայաստան ձեռնարկվող արշավանքը:

Այս ավանդությունը ևս արաբական բռնակալների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի շուրջ հյուսված պատմական, վիպական, ինչո՞ւ չէ՝ նաև քրիստոնեական լեգենդի մոտիվների մի ինքնատիպ խառնուրդ-համաձուլվածք է, որտեղ հայոց բարձրաստիճան հոգևորականը հանդես է գալիս որպես ոչ միայն հավատքի նախանձախնդիր, այլև հարազատ ժողովրդի խաղաղության ու անվտանգության անձնուրաց պաշտպան՝ օժտված գերբնական շնորհքով:

Վիպական և հրաշապատում մոտիվներով են համեմված նաև Հովհան Գ Օձնեցի հայրապետի մասին Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդած պատմությունները: Պատմիչը, որը, ի դեպ, առաջինն է տեղեկություն հայտնում մեր այս կաթողիկոսի մասին¹, Հովհան Օձնեցուն նկարագրում է թե՛ ներքին և թե՛ արտաքին բարեմասնություններով (105): Նրա արտաքին նկարագրության մեջ հատկապես զգալի տեղ են գրավում հրաշագործ տարրերը, ինչը ցույց է տալիս, որ Հովհան Օձնեցի կաթողիկոսի կյանքից երկու դար անց արդեն նրա կերպարը վիպականացված էր²:

Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդմամբ՝ Հովհան Օձնեցին զգեստի տակից ոչ թե բրդյա, այլ այծի մազից գործված կոպիտ ու անտանելի քուրձ էր հագնում, մինչդեռ դրսից զարդարվում էր գունավոր ընտիր նյութից պատրաստված զգեստով: Նա, ոսկին խարտոցով մանրացնելով ու նրա հետ անուշահոտ խունկեր խառնելով, փչում էր ալեխառն մորուքին, որն իջնում էր մինչև նրա զգեստի գրպանները: Վեհատեսիլ այս տարրերն ու զծերը, որ ամենայն հավանականությամբ ունեն վիպական բնույթ և առնված են ժողովրդական բանավոր կամ եկեղեցական գրավոր ավանդապատումներից,

¹ Տե՛ս **Զաքարյան Ս.**, Սուրբ Հովհան Օձնեցի. Իմաստասեր կաթողիկոսը, Երևան, 2019, էջ 35:

² Տե՛ս **Դալայան Տ.**, Հովհան Օձնեցու վիպական կերպարի համեմատական քննություն // «ԼՀԳ», 2020, թիվ 2, էջ 180:

Հովհաննես Դրասխանակերտցին հիշատակում է անշուշտ նրան կատարելատիպ ներկայացնելու համար:

Վիպական է նաև Հովհան օձնեցու տեսակցությունը արաբ ամիրապետի հետ, քանի որ այդ հանդիպումը ևս նկարագրվում է վիպական ժանրին բնորոշ գծերով¹: Պատմվում է, որ Հովհան օձնեցուն՝ «Աստու մարդուն», տեսնում է Վլիթ անունով մի ոստիկան, որն արաբ ամիրապետին պատմում է նրա վայելչության մասին, և ամիրապետը ցանկանում է տեսնել նրան: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու պատումի՝ Հովհան օձնեցուն մեծ պատվով բերում են արքունական քաղաք: Ամիրապետը նրան պատգամ է հղում, որ նա զգեստավորվի սովորական զարդարանքով, և ինքը նրան այդպես տեսնի: Սակայն Հովհան օձնեցին, իր բարձրահասակ, թիկնավետ կերպարանքը էլ ավելի փայլուն զգեստներով զարդարելով և նոր ճերմակած մորուքը ոսկե ծաղիկների փնջի նման կազմելով ու ձեռքն առնելով ոսկենկար գավազանը, որ երենոսյա փայտից էր, մտնում է ամիրապետի մոտ: Ամիրապետը սկզբում հավանության չի արժանացնում Հովհան օձնեցու արտաքին շքեղությունը, և արաբ կառավարչի հարցմանը, թե «Ընդ է՞ր՝ ասէ, այդպես պճնապաճոյճ լինիս. վասն զի Քրիստոսն ձեր զպարկէշտ և զչնչին զգեստ պատուեց և զնոյն արարին աշակերտք նորա» («Ինչո՞ւ ես այդպես պճնազարդված, [զուցե] նրա համար, որ ձեր Քրիստոսը պարկէշտ ու չնչին զգեստը պատվեց, և նույնն արեցին նրա աշակերտները») (106, 107), Հովհան օձնեցին պատասխանում է. «Թեպէտ Քրիստոսի Աստուծոյ մերոյ առ ՚ի մէնջ առեալ մարմնովն զաստուածական փառսն ծածկեալ լինէր իբրև վարագուրաւ. սակայն աստուածային զօրութեան սքանչելիք նշանացն ոչ ծածկեցաւ, այլ յամենեսին հեղաւ. զնոյն շնորհ նշանաց և արուեստից տալով ՚ի ձեռս աշակերտացն իւրոց, որ բաւական բերէր զմիտս մարդկան զարթուցանել յերկիրն Աստուծոյ՝ և ոչինչ պիտոյացան զգեստուց ահարկողաց: Իսկ արդ վասն զի փակեալ է ՚ի մէնջ բազում նշանաց նոցա շնորհ. վասն այնորիկ ահարկու իմն զգեստուք հնարիմք զպարզամիտ խակութիւն մարդկան ընդոստուցանել յերկիրն Աստուծոյ: Չայս ապա և ՚ի մանրմնաւոր թագաւորսդ ՚ի ձեզ է տեսանել. ծիրանեփառ և ոսկեճամուկ զգեստուք և գեղեցիկ զարդուք և զինուք առ ՚ի յահարկութիւն բազմաց բերիլ: Զի թէ խարազնազգեստ գձեզ ՚ի մարդկանէ ոք տեսանիցէ՝ և զծուծս և խոշորս, ոչ ոք պակուցեալ զարհուրեսցի ՚ի փառաց ձերոց, որ ոչն երևի» («Թեպէտև մեր Քրիստոս Աստվածը մեզնից առած մարմնով աստվածային փառքը թաքցնում էր ինչպես վարագույրով, սակայն աստվածային զօրության հրաշագործությունները չծածկվեցին, այլ լցվեցին բոլորի մեջ: Նույն հրաշագործությունների ու արվեստի շնորհը նա տվեց իր աշակերտներին, որ ի վիճակի էր մարդկանց մտքում արթնացնել աստվածավախություն, և կարիք չզգացին ահաբեկողների

¹ Տե՛ս Դավայան Տ., նշվ. աշխ., էջ 181:

զգեստի: Իսկ այժմ քանի որ մեզնից ծածկված է նրանց բազում հրաշքների շնորհը, դրա համար էլ ձգտում ենք այդ ահարկու զգեստներով միամիտ մարդկանց մեջ աստվածավախություն առաջացնել: Այս բանը կարելի է տեսնել նաև ձեր մարմնավոր թագավորների մեջ, որոնք զարդարված են ծիրանազարդ, ոսկեզարդ զգեստներով և գեղեցիկ զարդերով ու զենքերով, որպեսզի ահաբեկեն շատերին» (106, 107): Այս ասելով Հովհան Օձնեցին հանում է իր արտաքին զգեստները և ցույց տալիս այն այժամագե հաստ ու կոպիտ հագուստը, որ կրում էր տակից: Նրա համեստ պահվածքն ու խոսքերն այնքան են ազդում ամիրապետի վրա, որ տիրակալը մեծարում ու պատիվների է արժանացնում նրան՝ «եօթն անգամ զնա պճնաւորեալ գեղեցիկ իմն արքունական զգեստուք» («յոթ անգամ նրան զարդարելով արքունական զգեստով») (106, 107), և ուղարկում Հայաստան:

Հովհաննեն Դրասխանակերտցուց շուրջ երեք դար անց ապրած Կիրակոս Գանձակեցին Հովհան Օձնեցու մասին պատմում է գրեթե նույնը: «Այս փաստը հուշում է, որ թերևս նշված երկու պատմագիրներն էլ անկախ օգտվել են ժողովրդական բանավոր կամ եկեղեցական գրավոր ավանդապատումներից»², - գրում է Տ. Դալայյանը:

Ուրեմն, կարելի է համոզված ասել, որ Հովհաննեն Դրասխանակերտցին արժևորել և օգտագործել է ժողովրդական ավանդագրույցները, որոնք, ինչպես բանասեր-բանագետ Կ. Մելիք-Օհանջանյանն է գրում Կիրակոս Գանձակեցու կապակցությամբ, վերաբերել են «եկեղեցական գրույցներին» կամ «կրոնա-ժողովրդական մանրապատումներին»³:

Հրաշագործ հատկանիշներով է օժտված նաև Սիոն Ա. Բավոնեցին, որը մանուկ հասակից սնվել ու կրթվել էր հայրապետարանում՝ հանդես բերելով բնական առաքինություն: Մինչև հայրապետական աթոռին նստելը, երբ դեռ նա Աղձնյաց նահանգի հովիվն էր, պատմվում է, որ Սասունում՝ Սիմ լեռան ստորոտում, ցամաքում է մի հորդաբուխ աղբյուր, որը ռոռզում էր շրջակա բազմաթիվ այգիներն ու բուրաստանները: Դրա հետևանքով աղբյուրից օգտվող գյուղի բնակչությունը հայտնվում է ծանր կացության մեջ, քանի որ «սկսաւ ապականիլ և լքանիլ պտղաբերութիւնք գեղջն և յեղծումն աւերակաց բերիլ» («գյուղի պտղաբերությունը սկսում է ապականվել ու անտեսվել, նրան բերելով եղծում ու ավերում») (108, 109): Կատարվածը խորապես հուզում է նահանգի ոստիկանին, որը իր մոտ է կանչում եպիսկոպոսին և աղաչում նրան մի հնար գտնել՝ աղբյուրը դարձյալ բխեցնելու համար: Վերջինս խորհուրդ է տալիս դիմել Աստծու զորությանը և մի կիրակի՝ արևածագին, հավատացյալների խմբով շարժվում է ցամաքած աղբյուրի

¹ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 67-68: Նույնը արտատպված տե՛ս Դանալանյան Ա., նշվ. աշխ., էջ 304-305:

² Դալայյան Տ., նշվ. աշխ., էջ 182:

³ Մելիք-Օհանջանյան Կ., Կիրակոս Գանձակեցի, Երևան, 1961, էջ ԾԱ:

մոտ: Այստեղ աղոթք անելով ու տեղը խաչակնքելով՝ նա ձեռքում բռնած գավազանով խփում է ակունքին, և «յանկարծակի յական թօթափելն բղխե աղբիւր վտակեալ յօրդաբուղիս ականակիտ պարգուածին» («հանկարծակի ակնթարթորեն բխում է հորդաբուխ ականակիտ աղբյուրը») (110, 111): Այս հրաշապատումը, որ ակնառու նմանություն ունի հրեաների Մովսեսի՝ գավազանով ապառաժը խոցելով ջուր հոսեցնելուն¹ և հիշեցնում է նաև հայոց Ներսես Մեծ հայրապետի՝ աքսորի մեջ ամայի ու անջուր կղզում անուշ աղբյուր բխեցնելու պատմությունը², որ, ըստ Մ. Աբեղյանի, եկեղեցական զրույց է³, հարկավ դարձյալ առնված է ավանդական պատմվածքներից կամ եկեղեցական ավանդապատումներից, որ պատմականացրել է Հովհաննես Դրասխանակերտցին՝ զարդարելու Սիոն Ա Բավոնեցի հայրապետի կերպարը:

Բանահյուսական մտածողության երանգը որոշակիորեն զգալի է նաև Սիոն Ա Բավոնեցի կաթողիկոսին հաջորդած Եսայի Ա Եղիպատրուշեցու դեպքում, որը հայրապետական աթոռին նստում է հարազատ մոտ մարգարեական կանխագուշակմամբ: Այրի այս կինը, ինչպես, Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ, պատմում են նրա մասին, աղքատության մեջ ընկնելու պատճառով ծծկեր որդուն առած, շրջում է որպես մուրացիկ: Գալիս-մտնում է Դվինի կաթողիկոսարան և համառորեն մնում Տիրոջ տաճարի դռանը՝ «ցրտահար սառուցեալ ՚ի ձմերայնի լինէր և տապախարծ արևակեզ յամարայնի» («ցրտահարվելով ու սառչելով ձմռանը և տապախարշ ու արևակեզ լինելով ամռանը») (110, 111): Քահանաների հորդորներին՝ մտնել որևէ հարկի տակ և ապաստան գտնել, որբնայրին մերժելով պատասխանում է. «Ո՛չ գիտէք, զի սակս կաթողիկոսութեան զորդեակս իմ աստ սնուցանեմ» («Դուք չգիտեք, որ ես իմ որդյակին այստեղ մեծացնում եմ կաթողիկոսության համար») (110, 111): Եվ իսկապես, կնոջ կանխատեսությունը իրականանում է: Երեխան, հայրապետանոցում մեծանալով և կրթվելով, հետագայում հրավիրվում է նախ եպիսկոպոսության, ապա՝ հայրապետության բարձր պաշտոնի համար:

Այսպիսով, ինչպես տեսանք, Հովհաննես Դրասխանակերտցին վաղընթաց տարբեր իրադարձություններ, մասնավորապես VII-VIII դարերի հայ հոգևոր տարբեր անձանց գործունեությունը նկարագրելիս, բացի գրավոր սկզբնաղբյուրներից, մեծապես արժևորել և օգտագործել է նրանց մասին հյուսված ժողովրդական ու եկեղեցական ավանդապատումները, իր շարադրանքում ընդարձակ տեղ է հատկացրել հոգևոր այդ զինանոցին, որի շնորհիվ նաև հայ միջնադարյան պատմագրական երկերի շարքում նրա գիրքը

¹ Տե՛ս Աստուածաշունչ, Ելից գիրք, գլուխ ԺԷ, 4-6:

² Տե՛ս Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 147:

³ Տե՛ս Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 194-195:

ձեռք է բերել գեղարվեստական նշանակություն: Շնորհիվ այս ուսումնասիրության, կարծում ենք, հնարավորություն եղավ նաև առավել ամբողջական պատկերացնելու ու ճանաչելու Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչի ստեղծագործական յուրահատկությունները:

Վաչագան Ավագյան – Հովհաննես Դրասխանակերտցին և ժողովրդական բանահյուսությունը

X դարի հայ նշանավոր պատմագիր Հովհաննես Դրասխանակերտցին գրել է հայոց ամբողջական պատմություն և ներկայացրել այն նախնական ժամանակներից մինչև X դարի առաջին քառորդ ընկած ժամանակաշրջանը: Գրելով մասնավորապես VII-VIII դարերի այս կամ այն հոգևոր-պետական անձի մասին, բացի ձեռագիր սկզբնաղբյուրներից ու նրանց միջնորդությամբ իրեն անցած ժողովրդական բնույթի վաղնջական վկայություններից, նա ինքնուրույնաբար առատորեն օգտագործել է անգիր գրույցներ, օգտվել ժողովրդական ու եկեղեցական ավանդապատումներից և դրանք պատմականացնելով, անշուշտ, ձգտել ու ցանկացել է իր համակրելի պատմական հերոսներին անհատականացնել, սրբացնել և ներկայացնել ավելի կատարյալ: Բանահյուսական ծագում ունեցող այդ արժեքավոր պատումները, նաև հեղինակային մեկնաբանությունների շնորհիվ, ունեն սպավորիչ գեղարվեստականություն և գրական բարձր արժեք:

Вачаган Авагян – Ованес Драсханакертци и народный фольклор

Ключевые слова – Ованес Драсханакертци, Ован Майрагомеци, Ован Одзнеци, история, источник, фольклор, традиция, чудо-сказка, искусство, мотив, образ

Ованес Драсханакертци, великий армянский историк X века, написал полную историю Армении, представив период с древнейших времен до первой четверти X века. Когда он писал о том или ином духовном или государственном деятеле, особенно VII-VIII вв., кроме рукописных источников и передаваемых ими древних фольклорных свидетельств, он самостоятельно широко использовал устные сказания, народные и церковные предания. Преподнося эти предания как историческую истину, автор, безусловно, стремился и хотел персонализировать своих любимых исторических героев, обожествляя и представляя их в более совершенном виде. Эти ценные сказания фольклорного происхождения, благодаря комментариям автора, обладают впечатляющей художественной и высокой литературной ценностью.

Vachagan Avagyan – Hovhannes Draskhanakerttsi and Folklore

Key Words – Hovhannes Draskhanakerttsi, Hovhan Mayragometsi, Hovhan Odznetsi, history, source, folklore, tradition, conte, art, motif, image

Hovhannes Draskhanakerttsi, a famous Armenian historian of the 10th century, wrote a complete history of Armenia, presenting the period of the first quarter of the 10th century. While writing about certain religious or state figures, particularly of 7th-8th centuries, in

addition to manuscript sources and ancient folkloric evidences, the author independently used widely memorized stories, folk and church tales and by historicizing them, certainly sought and wished to personalize, sanctify, and present his sympathetic historical heroes more perfectly. These valuable stories of folklore origin, due to the author's comments, have an impressive fiction style and high literary value.

Վաչագան Ավագյան – ԵՊՀ հայ գրականության պատմության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու (avagyan.vachik@yandex.ru)

Ներկայացվել է 11.07.2021

Գրախոսվել է 27.08. 2021

Ընդունվել է տպագրության 30.11.2021